

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ԹԻՒՐԳԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՆՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԻՑ

Բերլինի համալսարանին կից գործող Արևելեան Լեզուների Մեմբերի Թիւրքաբանութեան ուսուցչապետ Դոկտ. Գ. Եշկէ նոյն հիմնարկութեան 1933 թ. գիտական Տեղեկագիրներում (Բ. Բաժին) մի համաօտ ուսումնասիրութիւն է հրատարակել, «Թիւրքիոյ Ազգային Ուխտի պատմութեան մասին» վերնագրով: Աւելի շուտ, հեղինակը ներկայացնում է այդ ուխտի համաօտ *Նախասլամու-թիւնը* միայն, սկսելով Օսմանեան պետութեան փլուզումից (հոկտ. 1918 թ.): Եւ Մուղրուսի զինադադարից:

Որպէս առաջին փորձեր այդ մարում վրա՝ յիշատակում են Կ. Պոլսոյ ակնբայժ Տաֆթ. Էսադի հիմնած (29 նոյ. 1918 թ.) «Ազգային Կոնգրէսը» եւ Ահմէդ Ռիզայի «Ազգային Բլոգը»: Վերջապէս, Քեազիմ Կարաբէֆի փաշան մի յօդածով («Ճումհուրիէթ», 16 մայիս 1933 թ.) իրեն է վերագրում «Թիւրքիան փրկելու միակ իրական մարման տեսնելու եւ ֆայլելու նախաձեռնութիւնը» (1919 թ. մայիս 3):

Եշկէ այդ բոլոր փորձերին «տեղական» նշանակութիւն է տալիս ու Թիւրքիոյ վերականգնումը համարում է Մուստաֆա Քեմալի գործ: Վերջինիս սկզբնաւորութիւնը նա դիտում է Ամա-

սիայի կոչը (21 յունիս, 1919 թ.), որպէս նախաֆայլ Սըվազի Կոնգրէսի: Սրա յապաղման պատճառով, Մ. Քեմալ հրապարում է նախ Էրզրումի տեղական խորհրդածողովը (Օգոստ. 1919 թ.) որին հետեւում են ապա Սըվազի Կոնգրէսը (սեպտ. 1919 թ.) եւ կոչը, այլ եւ Ազգային Ուխտի քանաձեւումը: Մինչդեռ, ասում է Եշկէ, Թիւրքիոյ Ազգային Ուխտի բնագիրը եւ քարգմանութիւնները մի քանի անգամ արդէն հրատարակած են *) իսկ Սըվազի կոչն էլ առաջ է բերած Մ. Քեմալի 1927 թ. հոկտեմբերին արտասանած մտում, « ցայժմ պակսում էր գրականութեան մէջ *էրզրումի կոչի* վստահելի վերարտադրութիւնը»: Եւ նա իր յօդածի վերջում առաջ է բերում այդ կոչի Թիւրքերէն բնագիրը ու գերմաներէն քարգմանութիւնը: Ինչպէս առհասարակ իր բոլոր գրածմանքը, նաեւ այս ուսումնասիրութիւնը Եշկէ օժտել է բազմաթիւ ծանօթագրութիւններով եւ ամբողջական աղբիւրների յիշատակութեամբ:

*) Այդ մասին տեսնել նաեւ Ա. Աբեղ-հանի «Թիւրքիոյ Ազգային Ուխտը» յօդածը, «Հայրենիք» ամսագիր 1923 թ. սեպտ. 1-ի թիւ:

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՇԱՀ ԻՍՄԱՅԻԼ Բ.-Ի ՄԱՍԻՆ

Արևելեան Մեմբերի «Տեղեկագիրներ»-ի նոյն հատորում (1933 թ.) գետեղած է մի ընդարձակ եւ ներուստ հետազոտութիւն պարսից Շահ Իսմայիլ

Բ.-ի մասին: Աշխատութեան հեղինակն է երիտասարդ իրանագետ *Վալտէր Հինց*, դասախօս Բերլինի համալսարանի եւ միեւնոյն ժամանակ վարիչ կրթական